


891.- 99.
L-44



19 NOV 2011

891.99
L-44

Եթու Եթունի

Ասու : „ԻՄ ԷՍՔԻԶՆԵՐԻՑ“

ԳԵՂԵՑԿԻՆ ՏԵՆՉՈՂԸ

2. УЗРІК

ՄԵԽԱՎԱՐԸ

ΘΡΩΠΑΝΕ

1001
1806



«ՊԵՏԱԿԱՆ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ

Nº 1.

02.05.2013

33382

իՄ
ՔՈՅՏ ՇՈՒՇԱՆԻԿԻՆ
վախճանւած
Խզդիրում 1904 թ. 28 սեպ.
Եւ
իւր ամռափին
ՄԿՐՏԻՉ ՄԻՐԻՄԱՆԵՍՆԻՆ
Երախտագիտուքեամբ նւիրում եմ
Գ Ր Ք Ո Յ Կ Ո

Լ. Աեւանի

1913 թ. 15 մայիս
հ զ դ ի ր

Թիֆլիս, սպառան Կերեսելիձե, 1913.

Գեղեցկին Տեսչողը՝ իդհիր—1913

Հայրը՝ » »

Մենամարտ՝ . . . » 1912

Ծիծաղը՝ . . . Ժընեվ—1909

ԳԵՂԵՑԿԻՆ ՏԵՆՉՈՂԸ



Դու անցորդի պէս քեզ միայն զգա,
Եւ որպէս ճամբորդ այս երկրի վրա,
Ազատ հայեացքով նայիր ամենքին
Եւ անվերջ քայլէ քո անյայտ ուղին...

Աւ. Խոահակեան

— Տակ-տակ:
— Ո՞վ է, անկողնում եմ. ձայնեց Սևակը
ծանրութեամբ:
— Ես եմ, լւեց տանտիրոջ աղջկայ կենս-
ուրախ ձայնը:

— Ի՞նչ կասէք, սիրելի Ժասմին:
— Նամակ քաղաքային փոստով:
— Բարի, ասաց Սևակը թռչելով տեղից:
«Ժամը 6-ին լինել գետախառնուրդում:

Մարի»

— Վատ չէ... Դարձեալ «մէկը»... ան-
շնուշտ... Գնալ... Այս, անպայման պէտք է գնալ...
«Տարիներից ի վեր քայլում եմ, քայլում
եմ առանց դադարի և չեմ գտել... Այդ ճշմար-
տութիւն է, սառը, կարկամեցնող ճշմարտու-
թիւն...

«Կեանք, կեանք... Եւ մարդս այստեղ մխիթարութիւն պէտք է գանի քայլելում... այս, միայն անվերջ փնտռելու մէջ...

«Եւ քայլում եմ անդադար... Եւ որոնում անվերջ... Քայլում եմ լացի, արցունքի միջով և լսում իմ յետկից նզովք ու անէծք... Սիրահարները քայլում են ինձ հետ և կիսաճամբին վհատում, մնում... Իսկ ես քայլում եմ... Իսկ ես փնտռում եմ...

«Եւ երկար՝ անվերջ պէտք է քայլեմ... Ես պէտք է փնտռեմ...

Սևակը վերկացաւ. լւացւելուց յետոյ անցաւ սեղանատուն։ Ժասմինը պատրաստել էր տարուկ ու համեղ նախաճաշ։

— Բարի լոյս, սիրունիկ ժասմին։ 0-, ինչպիսի նայւածք, նա կարող է կործանել դժոխքի դռները և շղթայել դեերին, սատանաներին։

— Սևակ... ասաց ժասմինը, շարժելով մատը։

— Իսկ չէք մերժիլ նստել իմ կողքին՝ աւելի շուտ vis-à-vis?

— Թողէք, խնդրում եմ։

— Ինչու էք վշտանում, հոգեկան ժասմին, երբ գիտէք զեղեցկի սիրահար եմ, իսկ դուք գեղեցիկ էք։

— Այդ շատ հեռու կը տանի ձեզ, Սևակ։

— Ես ընկճւել չը գիտեմ և ձգտում եմ դէպի հեռակ հորիզոնները... Դէպի... Նայեցէք ինձ, չքնաղ ժասմին։

— 0... *

— Մի ժպիտ, անուշ, հոգեկան ժպիտ և կը վերջացնեմ իմ նախաճաշը։

— Վատ...

— Եւ լաւ...

— Այս, և լաւ...

Փայտը թեի տակ, երկու ձեռքով ամուր բռնած, Սևակը բարձրացաւ համալսարանի երկրորդ յարկը, առանց նայելու խոժոռագէմ ուսանողներին, անցաւ, գնաց կանգնեց պարտիզին նայող լուսամուտներից մէկի առջեւ և յափշտակութեամբ սկսեց գիտել գաշտանկարը, որ գծւում էր հանդիպակած լեռան ստորոտին և բուռը հեշտանքով ժպտում արեի պսպղուն ճառագայթներին։

— Նայեցէք այս կախարդին...

— Մի ասէք, Գլէք, բողոքեց Լիդան։

— Եւ գուք պաշտպանում էք ձեզ տապալողին, Լիդա,

— Սևակը յանցաւոր չէ, երբ...

— Նա չը պէտք է թոյլ տար...

— Ցանկանում էի... իմ իղձն էր... ես երջանիկ էի...

— Նա ազնիւ է և շատ յարգելի, քան այն
պարոնները, որ խօսում, խորշում են նրանից:

— Սևակն արատաւրում է ուսանողութիւնը:

— Ո՞չ, ոչ, Գլէր, ընդհատեց Լիդան, սխալ-
ուում էք, նա առաքինի է, իւր կեանքն ընծա-
յաբերել է զեղեցկին, վսեմին, դէպի որը պէտք
է ձգտենք և մենք՝ համալսարանի շէմք մաշող-
ներս:

— Դուք ենթակայ էք նրա կախարդութեան:

— Նա կախարդել չը գիտէ:

— Երկի պատրաստ էք նորից յարել նրան:

— Ա՞խ, թէ յաջողւէր... Մըմնջաց Լիդան:

— Դուք ցանկանում էք կրկին անգամ
թրպլատալ այդ դեմ, այդ ճիւաղի ճիրաններում,
որ ընդունակ է յուսահատութիւն և մահ տարա-
ծել անվերջ:

— Պահէք ձեր չար լեզուն և, մի համար-
ձակւէք անւանարկել առաքինութիւնը:

— Ազատ էք... Ասաց Գլէրն ու հեռացաւ:

Սևակը թողեց լուսամուտը և փայտը դար-
ձեալ թեմ տակ, սկսեց մանր քայլերով շրջել
միջանցում:

«Համալսարան... մեծադղորդ անուն. և տեն-
չալի, և խորհրդաւոր—գիտութեան, վեհի, գե-
ղեցկի տաճար, սրբարան... հա-հա-հա... Որպի-

ոի ճարպիկ կատակ... ինչպիսի գառը խարէու-
թիւն... թշւառ խեղկատակներ...

«Կեանք... աչա որտեղ է խորհրդաւորը...
ահա ուր պէտք է փնտոել զեղեցիկը... Մտմաց
Սևակը կանգնելով Լիդայի առջե.

— Ի՞նչպէս էք, գեղեցիկ Լիդա:

— Շատ բարի էք, Սևակ:

— Եւ բարի..., և չար...

— Երբէք, չարութիւնը ակնածում է ձեզ-
նից և հեռու փախչում:

— Ես ենթակայ եմ նրան, և...

— Ամենաին, Սևակ:

— Եւ նա է իմ էութիւնը...

— Սևակ...

— Տիուր էք, անուշիկ Լիդա. ձեր նուշ
աչերը գժւարութեամբ են նայում վշտի—տան-
ջանքի միջով...

— Այդպէս էլ լինելու էր...

— Եւ թախիծը վանել, քշել է ձեր սիրուն
գէմքից ժպիտն ու ծիծաղը, խինդն ու ուրա-
խութիւնը:

— Ես կորցրի ամեն ինչ... յարգելի Սևակ.
պատասխանեց Լիդան, խոնարհելով թաց աչքերը:

— Դուք անձնատուր էք յուսահատութեան,
նազելի Լիդա:

— Որ թափանցել է ուղեղս և հիւծում,
սպառում է ինձ:

— Լսում էք, Լիդա, դասախօսութեան զանգը հնչում է:
 — Նա խորթ է ինձ համար:
 — Զուր, շատ բան կը կորցնէք, վրաբերեց Սևակը քմծիծաղ:
 — Ել բան չունեմ կորցնելու:
 — Ցտեսութիւն, բարի Լիդա:
 — Գնում էք, Սևակ:
 — Ներքեւ եմ իջնում, նա ցոյց տւեց պարտէզը, մի փոքը շնչելու ծաղկանց անուշհոտութիւնը՝ թարմանալու նրանց հմայքով, գեղեցկութեամբ:
 — Ինձ էլ տարէք ձեզ հետ, պաշտելի Սևակ:
 — Գեղեցիկը գեղեցիկների մէջ. այսպէս չէ, Լիդա, ասաց զգուշութեամբ բռնելով օրիորդի ձեռքը:
 — Անարդ, ստոր արարած, դեռ շարունակում ես ոստամյն հիւսել... Մոմոացին ուսանողուսանողուհիները և մտան լսարան:

Արեի ուշացած ցոլքերը, մոլորւած երեխաների նման, անմտօրէն վազվզում էին սարերի ծերպերին և հեալով յետ դառնում, փարւում հորիզոնում թագնուզ իրենց մօրը:

Գետը ջինջ, ինչպէս կոյսի կապուտ աչերը, և ծփանուտ, անհանգիստ, որպէս նրա հարուստ կրծքի հեքը, անուշ խշոցով գլորւում էր նոճի-

ների միջով և գրկում ձախ կողմից գոզը մտնող շարաճճի վտակի պղտոր ջրերը:

— Դուք ուշադի՞ր էք, թէ ինչպէս հովը անուշ մարմանդով խօսում է սիրահար տերևներին և նրանց համար հիւսում գեղեցկի զրոյցներ, պատմութիւններ, գիմեց Սևակն ընդառաջելով գետախառնուրդ եկող օրիորդին:

— Ես միայն լսում եմ ձեր հնչեղ ձայնը, որ կախարդում է իմ լսողութիւնը...

— Կամ տեսնում էք, թէ ինչպէս գիշերն արագ-արագ փաթաթում է զմրուխտ անտառը— նրան լուծում մռայլ, սև գրկում:

— Ես գիտում եմ ձեր խաղաղ դէմքը, որ տիրաբար իշխում է իմ էռութեան...

— Դուք կաշկանդել էք ձեր ազատասէր կամքը, օրիորդ Մարի:

— Ես չեմ ուզում նսեմացնել հոգիս պարփակող երջանկութիւնը, գեղեցկութիւնը...

— Գեղեցկութիւն...

— Անեղը, անսահման...

— ...

— Եւ դուք...

— Ո՛չ, ոչ,—օրիորդ՝ տարիներից ի վեր ես միայն վնասում եմ...

— Օ...

— Եւ պէտք է քայլեմ իմ ամբողջ կեանքում, առանց գտնելու...

- Դուք որոնեմ էք գեղեցիկը, երբ...
- Գեղեցի'կ է ներքեռմ հստող վտակի մըմունջը՝ միալար մեղեղին:
- Միայն:
- Եւ վերջալուսի գունեղ՝ կրակը՝ երեկոյեան շողջող շամանդաղում:
- Միայն:
- Գեղեցի'կ է սաղարթների խորքում համերգող թոշունների ներդաշնակ գեղգեղանքը՝ սիրոյ երգը:
- Միայն:
- Եւ անհունի ծոցում աստղերի մեղմիկ ժպիսը՝ սերովբէների հոգերուխ օրհներգութիւնը:
- Միայն:
- Գեղեցի'կ է արշալուսի հրդեհի տակ լճակի նազանազ զարթնելը՝ կոհակների մանկան յօրանջը՝ խօլական գրկախառնութիւնը:
- Միայն:
- Եւ սարալանջի ծաղկանց երփներանդ խմբերը՝ սիրատարփիկ ծփանքը:
- Միայն:
- Գեղեցի'կ է...
- Իսկ այստեղ, այստեղ... Ընդհատեց Մարին սառնարտութիւնը կորցրած:
- Ես կարօտ եմ... Ես ծարաւի'...
- Օ...

- Այս, յարգելի օրիորդ—տարիներ շարունակ վնասում եմ զեղեցիկը՝ վեհն ու վսեմը.— Թւում է այն կայ հեռում, բայց երբ մօտենում եմ, ամեն ինչ փոխում է պատրանքի և ցնդում, ինչպէս կապուտի ծոցում լուծւող մշուշը:
- Իսկ ես... մըմնջաց Մարին գողալով:
- Դուք գեղեցիկ էք, բայց ձեր գեղեցկութիւնը իսկոյն կը ցնդի, հէնց որ... Ոչ, ոչ...
- Շարունակեցէք, աղաչում եմ, ասաց, պինդ սեղմելով Սևակի ձեռքը, այրուղ, դողացող ափի մէջ:
- Ես սարսափում եմ, երբ կինը ցնցւում, գալարուում է կրծքիս վրայ... ինձ հալածում են նրա մարմնից փչող կիրքն ու զգայափրութիւնը.— և հեռնւ, շատ հեռու եմ փախչում՝ հեռուներում շարունակում իմ որոնումները...
- Եւ կանայք, ինչպէս կրակի մէջ վասող թիթեռներ, այրում են ձեր զրկում իրենց գեղեցկութիւնը:
- Ճիշտ այդպէս:
- Եւ նրանք դարձեալ ձգտում են դէպի ձեղ, լարեց Մարին բոցոտ աչքերով:
- Անդադար:
- Եւ գուք լքում էք նրանց:
- Հէնց այն վարկեանից, երբ նրանք դեցիկ չեն...

— ... Սիրում եմ ձեզ, անզին Սեակ, ա-
սաց օրիորդը բռնելով նրա միւս ձեռքը ևս:

— Մարի...

— Զեր շունչն այրում, տոչորում է ինձ:

— Օրինըդ...

— Ես կը տամ ձեզ և գեղեցիկը, և վսեմը:

— ... Երախտապարտ եմ:

— Եւ ամեն ինչ...

— ...

— Այժմ գրկեցէք ինձ:

— Մարի...

— Սեղմեցէք ձեր գրկում այնքան ամուգ,
որ դադարեմ ապրելուց... Ասաց տեղալով Սեա-
կի դէմքին ջերմ համբոյների ջղային տարափ:

• • • • • • •

— Այժմ...

— Գնում էք, ճշաց օրիորդը դալկանալով:

— Ես պէտք է քայլեմ...

— Անսի-իրտ...

— ... Ես ինտոում եմ գեղեցիկը:

— Ահ...

Մարին տարածեց անզօր թերը դէպի Սե-
ակը: Նրա հեկեկանքներն արձագանք տւին
ու լոեցին անհունի խորքում...

ՀԱՅՐԸ

Mon Ami, tu n'eo plus, et la vie
recommence:
Voici qu'autour de moi, ainsi
qu'aux jours passés,
La sève du printemps met sur les
vieilles branches
Les bourgeons, qui seront des
branches cet été...
T o u n y-L e r y s.

— Ահ, կըկին նոա...

Եւ Արուսը աջ ձեռքով սեղմեց սիրան ու
կուչ եկաւ իմ կողքին՝ նստարանի վրայ: Նրա
դէմքը կորցրեց բնական գոյնը, իսկ շրթունքնե-
րը կապտեցին:

— Ի՞նչ պատահեց, հարցրի շփոթւած:

— Այն գարշելին, այն հրէշը... Նա ցոյց
տւեց ծառուղին:

Դէպի մեզ էր գալիս մի ծերունի. — Կոա-
ցած մարմինը ծածկւած էր ցնցոտիներով՝ կեղ-
տոտ, զգւելի. Վլուխը բաց էր, ձերմակ մազերը,
միրուքը զզգւած, իրար խառնւած. Վայրագ աշ-
քերը նայում էին կատաղութեամբ, անճունի
բերանը ծամածութիւններով շարժւում էր և

անախորժ ձայներ հաճում ու մի ծիծաղ, խելագար ծիծաղ ֆոփում էր նրա աղտոտ դէմքին:

— Խելագար է. ասացի:

— Հէնց այդ խելագարը...

— Ծերունին երերալով կանգ առաւ մեր առջև, նայեց Արուսին չուծ, կատաղի աչքերով, արձակեց մի հառաչանք և դարձնելով քայլերը սկսեց վագել:

— Ճանաչեց՝ նա մեզ յաճախ էր տեսնում միասին:

— Հիւրի... Հիւրի...

— Լսում ես, կեռն—դարձաւ Արուսը դողալով—ծերունին է, նա կանչում է իր զոհին:

— Հիւրի... Հիւրի...

Նորից լսեց նրա ձայնը՝ մորմոքող հեծեծանքը և ամեն ինչ լոեց, մեռաւ մթութեան մէջ:

— Ամեն անգամ, երբ պատահում է, ցըշւում առաջս, սկսում է վրաս դժոխային հայեացքը, զնուում և ճանաչելով յետ դառնում ու ինչպէս մրիկ, վագում է կանչելով. «Հիւրի, Հիւրի...»:

— Դու հայհոյեցիր նրան:

— Հայհոյել շատ քիչ է, խեղել, բգկակէ եմ ուզում այդ անարդ, վաստ հօրը, որ... թող, կեռն, թող չը յիշեմ... Ասաց Արուսը հեկալով:

— Նրա կցկտուր խօսքերի տակ թագնւած էր ահաւոր ոճիր, մի քստմնելի արարք:

— Նա մեռել է, մոռանալով Արուսի խընդիրը՝ չը խօսել Հիւրիից՝ հարցըրի:

— Մի քանի ամիս է միայն... օհ... ծանր է, շատ ծանր... Նա էլ չը շարունակեց՝ արցունքները խեղում էին:

Քամին մեղմ զգուշութեամբ վախում, կարծես խօսում էր զբօսավայրի ծառերին՝ նըրանց պատմում այն սոսկալի արկածից, որ այնպէս ցաւեցնում էր Արուսին:

— Իմ խեղճ Հիւրի, իմ անբախտ քոյր...

— Շատ էիր սիրում նրան:

— Ոչ թէ սիրում, այլ պաշտում էի և նա միանգամայն արժանի էր:

— Գեղեցիկ, շատ գեղեցիկ էր Հիւրին—շարունակեց Արուսն արցունքով—նուրբ շինւածքին շատ էին գալիս ոսկեգոյն մազերի երկար կիւսկէնները, որ ողորմուր անցնում էին նազելի ուսերով և հասնում մէջքին. երկնագոյն աչքեց քաղցրութիւն, սէր էր ծորում. մանկական անուշ ժպիտը միշտ շողում էր կուսական շուրթերին, նրա անմեղ դէմքին:

— Արուս, պատմիր նրանից:

— Տխուր է, շատ ախուր Հիւրիի պատմութիւնը:

— Անշուշտ ընկերունիներ էիք:

— Մենք սովորում էինք տեղիս օրիորդաց

դպրոցում. թէ զատարանում՝ նստարանի վրայ, և թէ դասերից յետոյ՝ դրսում միասին էինք ու անբաժան:

«Մի երեկոյ, լարւած ուշադրութեամբ կարդում էի Բէբէլի «Կնոջ ներկայ և ապագայ դրութիւնը», երբ սենեակս մտաւ Հիւրին այլայլած և սկսեց գառնագին լալ:

— Հիւրի, իմ անգին, ի՞նչ է պատահել, ինչու ես լալիս, հարցըի գրկելով նրան:

— Արուս, դժբախտ եմ, շատ դժբախտ...

— Կարող ես մերժել:

— Եւ մերժել, և սպանացել եմ...

— Ու այդ չի՞ օգնում:

— Ամենաին:

— Պէտք է հասկացնես հօրդ, որ մի քանի ամսից յետոյ կարող ես աշխատել, թեթևացնել դրութիւնը:

— Ախ, մայր, իմ բարի մայր... Մըմնջաց Հիւրին:

«Նա կորցրել էր իրեն. — հօր յայտարարութիւնը, որ պիտի ամուսնայ իւր հաւանած մարդու հետ, խենթացրել, աշխարհից հանել էր Հիւրին:

— Այդ չի լինի, ասաց ոտք յատակին խփելով, մենք վճռել ենք աւարտելուց յետոյ մեղ նւիրել կրթութեան՝ աշխատել հազարաւոր խեղձերի համար, որ ծնուռմ ապրում են խոր տգիտութեան մէջ...

«Հիւրիի արձակւած մազերը թափւել էին

թաց այտերին, յուզւած կրծքին, դարձնելով նրան էլ աւելի սիրանւէր, էլ աւելի հոգեկան:

— Զես կարող օգնել ինձ, Արուս, ասաց Հիւրին ընկճած ձայնով և փարւեց ինձ:

— Ամենայն սիրով, սակայն լսիր, ով է այն պարոնը, որ ցանկանում է ամուսնանալ քեզ հետ:

— Ես չը գիտեմ, հայրս ասում է, նա շատ հարուստ է և ազդեցիկ:

«Այսօր մեզ մօտ էր եկել մսոտ գլխով, լըպիրշ արտայայտութեամբ մի մարդ: Նա քիթքթի խօսում էր հօրս հետ. ինձ տեսնելիս թողնում էր զրոյցը, զննում զնորդի զգւելի աշքերով և ծծում հաստ պոօշները...

«Երբ նա գնաց, հայրս դարձաւ ձեռքերը շինուալ:

— «Հիւրի, իմ անգին, այսուհետեւ էլ խեղճ չենք մնայ. Մկուն աղայ նաւօեանը ուզում է քեզ. չը նայելով քիչ հասակաւոր է, բայց, ոչինչ զաւակս, դրա տեղ ունի փող, որքան սիրտդ կուզի:

«Ես զգւանքով դարձրի երեսս:

— «Հը, գժգնի ես, գոռաց, սեղմելով բունցքը, ոչ մի հակառակութիւն, թէ չէ...

— «Դեռ սովորում եմ, հայրիկ:

— «Ախ, անզգամ, անպատկառ աղջիկ, ուզում ես գրակս գետնին տալ և խայտառակեր խօսք եմ տւել, խօսք: Այսօրւանից կը թողնես էդ անշահ դպրոցիդ մասին մտածելը և կը պատ-

բաստւես գնալու Մկուն աղի մօտ, նա այդպէս
ցանկացաւ:

- Ա... չը գնաս, Հիւրի:
 - Իսկ եթէ ստիպի:
 - Թող ստիպէ, որքան կը ցանկանայ:
 - Իսկ եթէ ծեծի:
 - Ծեծել... հարազատ հայրը չափահաս
աղջկան—այդ անկարելի է, Հիւրի:
 - Այսօր էլ... Նա աւելի սեղմւեց իմ կը ք-
քին և սկսեց նորից արտասւել:
 - Հանգստացիր, սիրելիս, հանգստացիր.
Երբ հեռու կը լինենք այս ճահճացած աւանից...
և ինքնուրացութեամբ կը խրւենք դործի մէջ, որ
ամենագեղեցիկը, ամենանախանձելին է, դու
կը մըռանաս այս ժամերը:
 - Արուս, երջանիկ եմ քեզ հետ և չեմ
վախենում, ասաց համբուրելով:
 - Վախենալու հարկ չը կայ, Հիւրի, միայն,
կրկնում եմ, չը գնաս այն մարդու մօտ...
 - Վատահ եղիր, Արուս ջան, պատասխա-
նեց և կրկին համբուրելով հեռացաւ:
-

«Երրորդ օրն էր, ինչ չէի տեսել Հիւրիին:
Այն գիշերից յետոյ մնացի անկողնում, սրախ
արատը նորոգւել էր և բժշկի պատէրով պէտք
է մնայի պառկած:

«Բաւական լաւ էի զգում ինձ և մեծ ցան-
կութիւն ունէի գնալ, տեսնել Հիւրիին՝ իմա-
նալ նրա դրութիւնը:

«Պատրաստում էի դուրս գալ, երբ ցիրչը
մի ապահովագրած նամակ ձեռքին ընդառաջեց:

— «Այստեղ է ապրում օրիորդ Ա. Երևան-
ցեանը:

— Ես եմ:

— Ստացէք խնդրեմ:

«Ես շտապով ստորագրեցի մատեանի մէջ
և վերցրի նամակը.—Հիւրիից էր.

«Իմ լաւ Արուս!

Երբ նամակս բերեն քեզ, արդէն մոռա-
ցութեանը, յաւիտենականութեանը կը լինեմ:
Վճռեցի մեռնել.—

Որքան սփոփանք ու երջանկութիւն կայ
այն վայրկեանում, երբ պէտք է լոել չը
խօսելու, չը յիշելու տանջանքի սկ ու ծանր
պատկերները, որ...

Հայր, հայր...

Իմ բաղի Արուս, ների, դրժում եմ ուվ-
ար, որ արել էինք՝ միասին լինելու, միա-
սին գործելու:

Ես անկարող եմ.—

Ահ, հայր...

Անցած գիշեր անցկացրի «Իմ փեսացուի»

մօտ՝ նրա սենեակում... Ես չեմ պատմի
հոգեկան, ֆիզիքական այն տանջանքները,
որոնց ենթարկւեցի... Նրանք կը խոցեն քո
սիրող սիրտը, քնքուշ հոգիդ:

Հօրս ոճրագործ մատգրութիւնը գիտէի...
Ես լուռ հնազանդւեցի, որ «լաւ ապրել
կ բողանայ»...

Հայր

Վատ աշխարհ:

Յաճախ, շատ յաճախ տիրութեամբ, ար-
ցունքներով կը յիշես այն սիրուն ժա-
մերը, երբ ծրագրում, հաշւի էինք առնում
ապագայի մեր անելիքը և երջանիկ էինք:
Ինչպէս վաղանցուկ է և ուրախութիւնը,
և ամեն ինչ: Մի քանի օր առաջ երջանիկ
էի, իսկ այժմ...

Կեանք.

Զար աշխարհ:

Արուս, իմ լաւ Արուս, կը ներես ինձ,
այնպէս չէ. դու գարձեալ սիրելով ինձ,
կը պահես իմ յիշատակը:

Էլի մի անգամ գրկում, էլի մի անգամ
համբուրում եմ քեզ, իմ բարի, լաւ քոյր:
Քեզ սիրող Հիւրի»:

«Ես տեսայ Հիւրիին քաղաքային հիւանդա-
նոցում: Նրան գտել էին ձկնորսները զետի-
ծանծաղուտում խեղդւած:

«Նա պառկած էր երկար սեղանի վրայ,
սպիտակ սաւանով ծածկւած: Փակ աչքերից
անմեղութիւն, սէր էր կաթում. Ժպիտը, որով
բոլոր մեռեալները ծաղրում, հեզնում են անցա-
ւոր աշխարհը, հանգչում էր դալուկ դէմքին,
լուռ շուրթերին. ճոխ մազերը երկուսի բաժան-
ւած, թել-թել ծածկում էին նրա մարմար լան-
ջը՝ կուսական ստինքները:

«Հայրը այնտեղ էր...

10.
TETRAS

Մենք ապրում էինք Փընեվի Plainpalais
(Ռւսանողական) թաղում և ունեինք Mademoiselle Marchand պանսիօնում կից սենեակներ:

Նա՝ իմ հարևանուհին գեղեցիկ էր, ինչպէս
յուսնկայ գիշերին ծփացող հեզանուշ լճակ, և
նրանից բուրող սիրոյ շոգին արբեցնող էր, որ-
պէս գարնան նորաբաց վարդ:

Ես յարգում, ընկերս սիրում էր նրան բու-
ռը սիրով—թւում էր, նրանք երջանիկ էին:

Մի առաւտո, նոր էի բարձրացել անկող-
չուց, երբ դուռս ամուռ բախեցին:

— Մի ըոպէով, կամիլ:

Ես շտապեցի. նա էր՝ իմ հարևանուհին,
գունաթափ և դողդողում էր:

— Ի՞նչ է պատահել, Յօղիկ, հարցրի բըո-
նելով ձեռքերը:

— Խուսափեցէք, ի սէր Աստծու:

— Ինչից, Յօղիկ:

— Մերժեցէք, աղաչում եմ մի պարոն է
եկել, ինչպէս սեկունդանս, և մենամարտի կան-
չում ձեզ:

— Միծաղելի՛ է:

— Նա պատճառաբանում է, որ վիրաւորել
էք իր ընկերոջ:

— ԳԺԵԼ են, ինչ է:

— Օ՛, Կամիլ, սաստիկ վախենում եմ:

— Հանգստացէք, Յօղիկ, և թողէք ձեր
յուզմունքը:

Փոքը ինչ յետոյ հարեանունուս առաջնոր-
դութեամբ սենեակս մտաւ սեկունդանալը:

— Դուք էք, պ. Քօցօցեան. համեցէք,
իմնդրեմ:

Քօցօցեանը յեղափոխական էք. Ես ճանա-
չում էի նրան Կովկասից. բայց այն մեծ էքը—
պրօպրիացիայից յետոյ, գալով ժընեվ մտել էք
«յեղափոխական-արիստոկրատների» շարքը, որ
այնքան շատ են Շվեցարիայում...

— Պարհն,—ասաց ինքնավստահութեամբ—
դուք վիրաւորել էք իմ ընկերոջ և արատաւո-
րել մեր պատիւը. ուստի, կամ պէտք է օրիոր-
դի ներկայութեամբ ներողութիւն խնդրէք նրա-
նից, կամ...

— Դուցէ և այլոց ներկայութեամբ... Բայց
դուք կատակ չէք անում, պ. Քօցօցեան:

— Ինչպէս թէ կատակ, պատասխանեց, ա-
ւելի ցցելով գլուխը—ուրեմն մոռաննում էք ձեր
տգեղ վարմունքը:

— Ինչեր էք ասում, պ. Քօցօցեան:

— Այն, երէկ դիշեր թատրոնի նրբանցքում

Ֆիծաղել էք, երբ ընկերս անցնելիս է եղել ձեր
կողքով, և օրիորդ Յօղիկը...

— Այ քեզ նորութիւն։—ասացի ընդմիջե-
լով—Ի՞նչ է ձեր ընկերը ցանկանում է որ ամե-
նեկն չըծիծաղեմ, որովհետեւ նա կարող է յան-
կարծ անցնելիում մօտով—ասացէք ինդրեմ։—Երե-
ւում է պարոնը շատ վառ երեակայութիւն ունի,
այլ կերպ ինչպէս բացատրել երևոյթը, երբ չեմ
էլ ճանաչում նրան։

— Այն, վստահութեամբ կասեմ՝ պ. Կամի-
լը չի ճանաչում ձեր ընկերոջ. սակայն լաւ չէր
լինի բացատրէիք պ. Լօրիսի հետ։

— Ես նրան ոչինչ չունեմ բացատրելու։

— Ո՞չ, ոչ—օրիորդը ճիշտ նկատեց՝ դուք
պարտաւոր էք անպատճառ բացատրէլ նրա հետ։

— «Պարտաւոր էք...» Ամենեկն, պ. Քօ-
ցօցեան, ոչնչով պարտական չեմ, երբ ձեր ըն-
կերը աւելի քան տարօրինակ է։

Այդ միջոցին մեզ մօտ մտաւ ընկերս՝ Քի-
շասը, Ես նրան պատմեցի եղածից։

— Լաւ, Կամիլ, —ասաց—Ի՞նչ կայ, գնա
բացատրէր պարոնի ընկերոջ հետ և հանգստա-
ցրու նրան։

— Հոգեբռնւժ եմ, ինչ է՝ երբէք։

— Զգուշացէք, պարոն...

— «Մենամարտ...» Հա-հա-հա... Խնդրեմ,
ես պատրաստ եմ, և դուք, եթէ չեմ սխալում,
հէնց այդ նպատակով էլ եկել էք.—իմ կողմից
ատրճանակ:

— Կամիլ... Ճշաց Յօղիկը, թռչելով տեղից:
Ամեն ինչ վերջացած էր: Քոցօցեանը շատ-
պով սեղմեց Յօղիկի ձեռքը և հեռացաւ:

— Թոն, խնդրում եմ յիմարութիւններդ—
թնդաց Քիլասը—ես կը դնամ, կը պարզեմ թիւ-
րիմացութիւնը:

Հանգստացնելով Յօղիկին, որ դեռ յուղ-
ւած էր, սկսեցի շահմատ խաղալ նրա հետ, ա-
ռանց անհանգստանալու, որ անմիտ ախոյեանու
կարող էր շուտով «ի վերին Երուսաղէմ» ուղե-
ւորել:

Գիտէի, ձեռքս չէր դողայ այն աշխարհ ու-
ղարկելու մի թշւառական...

Ինձ ինչ, չէ որ մեռնողը նա էր...

— Ահա թէ «որտեղ է թաղւած եղել շահը
զլուխը»,—ասաց Քիլասը հեալով:—Դու, Յօղիկ,
սիրում ես ինձ:

— Միթէ դրանում պէտք է կասկածել,
Քիլաս, պատասխանեց Յօղիկը շիկնելով:

— Այդ մենք կը տեսնենք:—Ահ, կամիլ,
չարաչար խաբւած եմ, ասաց Քիլասը վրդովւած.
Նրա ձայնը դողաց ջութակի վերջին հնչիւնների

նման, իսկ աչքերը վառւեցին անսովոր կրակով:
«Քոցօցեանի հետ գնացինք Լօրիսի մօտ.
վերջինս դիմեց ինձ լացող ձայնով:

— «Միթէ օրիորդ Յօղիկը չի յայտնել, որ
սիրում եմ իրեն, էլ ինչու է ձեր ընկերը Փըռ-
ֆուռում նրա շուրջը:

«Ես ցնցւեցի:

— Դուք սիրում էք Յօղիկին:

— «Այս, պարոն, և նա էլ ինձ է սիրում:

— Ինչպէս, Յօղիկը սիրում է ձեզ:

— «Նոյն այն ժամից, երբ պատահեցինք
համալսարանում:

— Այդ սուտ է՝ նա զրպարտում է, մենք
լոկ ծանօթներ հենք եղել, հարա տւեց Յօղիկը:

— Սպասեցէք, օրիորդ, այդ կըպարզեմ:—
Լօրիսն այնունեաւ պատմեց այն ամենը, ինչ
տեղի է ունեցել իրենց մէջ...

— Ախ, Աստւած իմ, նա ստախօս է, նա
սրիկայ է, ասաց Յօղիկ հեկեկալով:

— Ստախօս դուք էք, դուք. — որոտաց
Քիլասը—կարդա, կամիլ. նա ձգեց իմ առաջ
մի կապոց նամակներ:

— Այ թէ ինչ...

— Ես նզովում եմ ձեր սեռը—ընդհատեց
Քիլասը սրտմտութեամբ,—որ գիտէ խաբել, կեղ-
ծել, շողոքորթել ու քծնել... Օ՛, դուք...

— Հանգստացիր, Քիլաս:

Նա ամբողջ մարմառվ ցնցւում էր:

— Եւ ինչու այդ բոլորը, — առաջ տարաւ
աւելի բորբոքւելով, — որպէս զի ցոյց տաք ձեր
սեռակիցներին, որ ունէք Լօրիսի և ինձ նման
«տխմար» երկրպագուներ, որպէս զի յագեցնէք
ձեր անարդ եսը՝ արբենաք, հրճէք, մեզնից
վազող կեանքով... «Զնի, զնի»... Ահա կանանց
ցանկութիւնը, և որքան շատ են այդ զոհերը,
այնքան պահանջում էք «էլի՛, էլի՛»... Դուք,
դուք...

Քիլասը էլ չը կարողացաւ շարունակել՝ բուռը
յուզմունքը խեղզում էր նրան:

— Կամիլ, — դիմեց ինձ, — գնում եմ առաւօ-
տեան ժամը 4-ին կը գաս ինձ մօտ Սալէվ¹⁾ բար-
ձրանալու՝ քեզ նշանակել եմ սեկունդատ...

Ծ Ւ Ծ Ո. Ղ. Ը

¹⁾ Ֆրանսական սար է Ժլնելի արևելիան կողմում:

Մի ծիծաղ է մտել քիթս և անդադար ծիծաղեցնում է ինձ։ Նա սկսւեց բարակ, շատ թոյլ ժպիտով, որ գնալով մեծացաւ ու փոխւեց ծիծաղի, — նման կոհակների, որ աստիճանաբար դառնում են լեռնանման ալիքներ և փոթորկում ջուրը։

— Ծիծաղն էլ յուզեց, փոթորկեց ինձ։
Ես ծիծաղում եմ սենեակում՝ միայնութեանս ժամին, ծիծաղում եմ փողոցում՝ մարդկանց բազմութեան մէջ։

Ես ծիծաղում եմ ամեն տեղ։

Մարդիկ, մանաւանդ կանայք նայում են ինձ մեծ հետաքրքութեամբ։ — Անա այս վերջինների դէմքին էլ ժպիտ եմ նկատում, ժպիտ, որ դիտէ ծիծաղեցնել։ Կանայք էլ են ծիծաղում, բայց աւելի եռանդով, աւելի մեծ քրքիջներով։

Ես վարակում եմ կանանց ծիծաղով։

Այլևս անհնար է փողոցում միալ, փախչում եմ տուն, մտնում տանտիկնոջս մօտ, ուզում եմ նրան պատմել ծիծաղս։ սակայն ինչ, նա էլ է ծիծաղում։

— Ի՞նչ է պատահել, տիկին, ինչու էք ծիծաղում, դիմում եմ, աշխատելով պահել ծիծաղս։

— Պարոն՝ փողոցով անցնող կամայք ծիծաղում էին, պատասխանում է, ծիծաղից թռւլանալով:

— Բայց, ներեցէք, դուք ինչ ունիք ծիծաղելու և այն էլ այնպիսի թափով, որ կարող է խախտել ձեր առողջութիւնը:

— Ոչինչ, սեռակիցներիս ծիծաղը մոռացնել է տալիս ամեն բան: Օ՛, պարոն, նրանք բոլորը, բոլորն էլ ծիծաղում էին. և ինչպէս... Յաւում եմ, որ չեմ ընկերացել նրանց.—Երեկի գա նորութիւն է, մի նոր մօդա այսօրւանից քաղաք մտած:—

— Ուրեմն, բարեկամ, պէտք է ծիծաղել:

Եւ նա ծիծաղում է ուժգնութեամբ—յիշաւի մոռացած ամեն ինչ:

Ես էլ եմ ծիծաղում. ծիծաղում եմ խենթին յատուկ ծիծաղով՝ անդադար, անվերջ... Ինչ արած, երեկի պէտք է ծիծաղել, որ ծիծաղում եմ...

Եւ ես ծիծաղում եմ...

Կէս գիշեր է, թռւլացած ծիծաղից մտնում եմ անկողին և իսկոյն քնում. առաւօտեան զարթնում յոդնած, սակայն հանգիստ՝ այն խենթ ծիծաղը էլ չը կայ: Լւացւում եմ, հագնւում և ուզում եմ նախաճաշ խնդրել. բայց յիշելով տանտիկնոջս, ես վարանում եմ:—

Եթէ այն չարաճճի ծիծաղը դարձեալ մանի

քիթս, Աստւած վկայ, ես կը հիւանդանամ:

Զանգահարում եմ, տիկինը բերում է նախաճաշը, ժպիտը երեսին բարեսում ու անցնում:

Զէ, նըա՝ դէմքի չարաշուք ծալքերը բարիբան չեն խօստանում. շատ հաւանական է ճաշին ծիծաղելիս, իսկ ընթրիքին անտանելի կը լինի:

Եւ որոշում եմ հիւանդութեան պատրւակով թէ ճաշը, թէ ընթրիքն ուտել առանձին և չը պատահել տիկնոջ: Ես վճռում եմ մանաւանդ փողոց, փողոց դուրս չըգալ՝ չըտեսնել կանանց ծիծաղկուդէմքերը:

Ոչ, ես չեմ կարող՝ այս գիշեր պէտք է գնամ պարահանդէս. Ի՞նչ կը լինի իմ դրութիւնը այնտեղ՝ մարդիկ խելագար կանւանեն ինձ:

Եւ ես անց եմ կացնում իմ օրը սենակում, կարգալով և պարտիզում, զիխակոր զբօսնելով:

Շատ քիչ է մնացել մինչև պարահանդէս սկսւելը: Արագ-արագ սափրում եմ կարելով երեսս աջ ու ձախ. հագնւում եմ նոյն արագութեամբ և նետւելով փողոց, առանց շուրջս նայելու, շտապում եմ կառքերի հրապարակ:

Ես կառք եմ վերցնում, որ ազատ լինեմ ծիծաղներից:

Մօտենում եմ մի կառապանի. խնդրում եմ նրան ծածկել կառքը և շուտով հասցնել Համալսարանի փողոց:

— Պարոն կառքը ծածկելու կարիք չը կայնայեցէք եղանակը ի՞նչ...

— Խնդրեմ, — շտապում եմ ընդհատել — յիսուն աւել կը ստանաք ձեր նեղութեան համար, միայն շտապեցէք՝ ժամանակս շատ կարճ է. սում եմ և թոշում կառը:

Ահա և հիւրանոցը, ուր պարահանդէսն է կազմակերպւած: Շտապ-շտապ իջնում եմ ցած. դունապանուհին բարեում է բաւականին լուրջ ծիծաղով:

Այդ լաւ նշան չէ, անհանգստանում եմ և ամեն ծիգ գործ գնում, տեղի չը տալ այն անպիտան ծիծաղին, որ գիտէ յիմարացնել:

Ամենայն լրջութեամբ, սակայն ծիծաղի միկրոբները կուլ տւած, ևս բարձրանում եմ ստոիծաններով:

Վահ, հէնց նախադահիճում պատահում եմ մի խումբ կանանց, որ խելահեղ քըքիջներով աղմկել են օդը՝ թնդացնում դահիճը:

Ուզում եմ յետ դառնալ՝ չուզենալով հանդիսի բաւականութիւնը. բայց երբ վալ'սի գիւրեկան, գրգռող ձայնը դիպչում է ականջներիս, ևս կանգ եմ առնում. ուրախութիւնից սիրտս սկսում է արագ-արագ բարախել և իմ ոտները ակամայից վա'լս պարելու դիրքն են ստանում:

Ել ճար չը կայ...

Մտնում եմ ներս, և ինչ, տէր Աստւած. ամբողջ դահիճը, որ զարդարւած է կանացի ծաղրանկարներով, թնդում է ծիծաղից:

Ծիծաղում են պարողները, ծիծաղում նայողները, ծիծաղում է նոյնիոկ նւազող խումբը. իսկ կանացք — ախ այդ չարաճճի կանացք...

Ել անհնար է սառնասրտութիւն պահել. — ես էլ եմ ծիծաղում, և որքան ծիծաղում եմ, այնքան կարիք եմ զգում ծիծաղելու...

— Այս ի՞նչ է նշանակում, եղբայր. այս ի՞նչ ցաւ է. միթէ ծիծաղ հիւանդութիւն էլ գոյութիւն ունի. եթէ այն կայ, էլ ոչ ոք չի կարող ազատ մնալ նրա համաճարակից՝ բոլորս էլ ծիծաղի սաղմեր ունենք:

— Ամեն մօղա երկան գալիս միշտ մեծ ընդունելութիւն է գտնում սկզբնական շըջանում, ծիծաղն էլ ինչպէս մօղա, շատ բնական է, հոծ բազմութիւն կընդգրկէր, պատասխանում է մէկը բարեկամներիցս:

— Ինչպէս թէ մօղա. ի՞նչ է պատահել ձեզ, ասում եմ օրանեղած:

— Լսեցէք, սիրելիս, լսեցէք և դուք կը համոզւէք: Ես կանգ չեմ առնում կանանց զգեստների ձկի վրայ, որը եթէ ոչ շաբաթը, գոնէ ամիսը մի անգամ փոխում է. — այն քօղերի վրայ, որ մերթ թոշում են նրանց սիրուն գլխին, մերթ ծածկում անուշ զէմքերը: Ոչ, ես չեմ խօսում կանանց կրծքերի մասին, որ յաճախ սեղմւում են կօրսէտներով՝ աւելի մեծ, աւելի ուսուցիկ դարձնելու, կամ ազատ են ձգւում, մեղ խեն-

թացնելու դիտաւորութեամբ... Իսկ նրանց մա-
ղերի հազարատեսակ յարդարումը...

— Բայց... ուզում եմ ընդմիջել:

— Բայց ես կանգ չեմ առնում թւածնե-
րիս վրայ և ձեր բարի ուշադրութիւնը հրաւի-
րում կանանց ձեռքերի նազանքին, որ այնքան
համբոյրներ խլող է... նրանց խօսելու՝ ձայնի
երեջի վրայ, որ ինչպէս մի հոգեկան նւագ,
գրաւում է մեր լսողութիւնը, հարկադրում մը-
տածել միայն իրենց մասին... նրանց գիրգ շուր-
թերի սիրածոր դողին, որ...

— Սակայն ծիծաղը...

— Սպասեցէք, սպասեցէք, բարեկամ՝ դեռ
չեմ վերջացրել: Երկի մոռանում էք կանանց աշ-
քերի սիրանուշ հայացքը, որ դիտէ դժոխքը տա-
նել... Նրանց գողարիկ շաբժումները՝ շրջադրեստ-
ների ներդաշնակւելը համաշափ քայլերին, որ
այնքան ուշագրաւ է... Նրանց աստւածային
ժամկան, որ յուզում է այտերը և սիրալի փո-
սիկներ կազմում... Իսկ...

— Ընդունենք, այդ բոլորն աւելի սիրելի,
աւելի պաշտելի է դարձնում կնոջ՝ ընդհատում
եմ ես—կամ աւելի շուք, աւելի փայլ է տալիս
նրան. բայց միթէ ծիծաղն էլ կարելի է այդ-
պիսին ընդունել:

— Անշոշտ այն, և աւելին՝ այդ դրութեան
մէջ կինը շատ թովիչ, շատ դիւթող է: Հապա-

նայեցէք իդային, նա, որ առհասարակ քիչ է
զբաղեցնում, այսօր խենթացնում է ինձ...

Նա նոյն իդան է:

— Ինչպէս թէ նոյն.— Երբէք տեսել էք,
նրա այտերը՝ ներկւեն վարդ կարմրով, աչքերն
այդ քաղցը, սպանիչ արտայայտութիւնն ունենան՝
նրա կուրծքը այդ օրինակ բարախի, և...

Թողնում եմ բարեկամիս ու մօտենում կա-
նանց՝ իմանալու նրանց կարծիքը ծիծաղի մա-
սին:—

Ում դիմում եմ ծիծաղով է միայն պա-
տասխանում ինձ:

— Ծիծաղ ու ծիծաղ՝ անվերջ, անսահման...



Մրբագրչի անուշադրութեան ժնորհիւ մի բա-
նի կարեւոր սխալներ են սպրդել:

ՀՀ Ազգային գրադարան



NL0349142

33382

